

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ԵՎ
ՄՇԱԿՆՈՒՅԹ**

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՆ

Ա

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2011

Карен Мкртчян, Армяно-иранские торгово-экономические отношения 1991-1995 гг. - Благодаря своему южному соседу Исламской Республике Иран, Республика Армения в 1990-ых годах приобрела противоядие к турецко-азербайджанской экономической блокаде. Между Ираном и Арменией установились крепкие торгово-экономические связи. И так Армения с честью вышла из трудного положения.

Karen Mktchyan, The Armenian-Iranian Trade-Economical Relations in 1991-1995.-In the 1990-s the Republic of Armenia, thanks to his Southern neighbour the Islamic Republic of Iran, acquired counter balance to Azerbaijan-Turkish economical blockade.The close trade-economical connections were established between Armenia and Iran. Thus, Armenia came out with credit from historical grave condition.

Հովհաննես Խորիկյան

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՆԱԿՆԻՆ ՄԱՐՄԱՆԻ ՇՈՒՐՋ

Հայկական մարզպանության հյուսիսային սահմանի մասին հիմնական տեղեկությունները հաղորդում են հայկական աղբյուրները, որոնք շատ հաճախ ճիշտ չեն մեկնաբանվում որոշ ուսումնասիրողների կողմից: Սասանյան Պարսկաստանի վարչաքաղաքական վերածնունդներն Արևելյան Մեծ Հայքում և Վիրքում առաջ էին բերում սահմանների փոփոխություններ, որոնք, ըստ էության, պայմանավորված էին քաղաքական հանգամանքների թելադրանքով, և պատահական չէ, որ հայ պատմիչների վկայությունները Հայկական մարզպանության հյուսիսային սահմանի (ըստ այդմ էլ Վրաց մարզպանության հարավային սահմանի) վերաբերյալ արտացոլում են տարբեր ժամանակաշրջանների վարչական իրողությունները: Այս առումով, բնականաբար, առաջին հերթին հետաքրքրություն է ներկայացնում Գուգարաց բղեշխության սահմանների հստակեցումը, որը 387 թվականին մտցվել էր նոր ձևավորված Վրաց մարզպանության մեջ¹: Մովսես Խորենացին Գուգարաց

¹ Տե՛ս Հարությունյան Բ., Մեծ Հայքի Գուգարք աշխարհը ըստ «Աշխարհացոյց»-ի, «Բանբեր Երևանի համալսարանի», 1977, թիվ 2, էջ 191-192: 248

բղեջխության մասին¹ գրում է. «Իսկ Գուշարայ, որ յորդուցն Շարայի, ժառանգեաց զլեառն Մթին, որ է Կանգարք, և զկէս մասինն Ջաւախաց, զԿողբ, զԾոր, զՉոր, մինչև ցամուրն Յնարակերտ: Բայց զտէրութիւնն Աշոցայ, և զսեպհականութիւնն Տաշրաց կարգէ Վաղարշակ ի զաւակացն Գուշարայ Յայկազնոյ»²: Բերված տեղեկությունից պարզվում է, որ Աշոցքի տերությունը՝ նախարարությունը, չի ենթարկվել Գուգարաց բղեջխությանը և ունեցել է բավականին ընդարձակ տարածք, որի մեջ էր նաև Ջավախքի մյուս մասը³, որը չէր մտնում Գուշարի տիրույթների մեջ: Ինչ վերաբերում է Տաշրաց սեպհականությանը, ապա այս հարցը մենք դեռ կքննենք: Ջավախքի մյուս մասի՝ Յայկական մարզպանության կազմում լինելու մասին կարծիքը հաստատում է նաև VII դարի 40-50-ական թվականներին վերաբերող Հովհան Մամիկոնյանի այն տեղեկությունը, որ «Աբդառահիմ անցանէ ի Հարք և ի Բասեան, ի Վիրք և ի Ջաւախս և ի Վանանդ. և առեալ հարկս, դառնայ ի Տաճկաստան»⁴: Թեղեկությունից ակնհայտ է, որ Վիրքից առանձին հիշատակված Ջավախքը մտել է Հայոց մարզպանության մեջ, իսկ Վանանդից առաջ հիշատակվելն արդեն ցույց է տալիս, որ հեղինակը նկատի ունի Ջավախքի մյուս մասը՝ Աշոցքի հյուսիսը: Պատմահոր այն հաղորդումն էլ, թե

¹ Անդ, էջ 177:

² Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և ներածութիւնը Մ. Արեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, լրացումները Ա. Բ. Սարգսեանի, Երևան, 1990, էջ 113: Խորենացու այս տեղեկությունը գրեթե նույնությամբ կրկնում է Ստեփանոս Ասողիկը. «Իսկ Գուշարայ, որ յորդուցն Շարայի՝ ժառանգեաց զլեառն մթին, որ է Կանգարք, և (զ)կէս մասինն Ջաւախաց, զԿողբ և զԾորն մինչև ցամուրն Յունարակերտ» (տե՛ս Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս.Պետերբուրգ, 1885, էջ 35): Են՛ս նաև «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 30:

³ Տե՛ս Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 190: Ըստ Ա. Մելքոնյանի, Վերին Ջավախքը նույնանուն է Խորենացու նշած «զկէս մասինն Ջաւախաց»-ի այն հատվածի հետ, որը գրադեցրել է զավառի հարավային ու հյուսիսարևելյան բարձրադիր մասերը և տրվել է հարևան Շարայի՝ Շիրակի գավառին, իսկ Ներքին Ջավախքն էլ մոտավորապես համապատասխանում էր Խորհրդային Վրաստանի Ասպինձայի վարչական շրջանի հյուսիսային մասին (տե՛ս Մելքոնյան Ա., Մեծ Հայքի Գուգարք աշխարհի Ջավախք գավառը, «Յայկական լեռնաշխարհը հայոց և համաշխարհային քաղաքակրթության բնօրրան», Հայագիտական գիտաժողով, 13-15 նոյեմբերի, 2003, Ձեկուցումներ, Երևան, 2004, էջ 205): Ջորանամակում Աշոցքի իշխանի հեծելազորի թիվը 500 է (տե՛ս Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 294), որը հնարավոր էր միայն Ջավախքի մյուս մասի՝ Աշոցքի կազմում լինելու դեպքում, քանի որ Աշոցքը իր բնական պայմանների պարագայում չէր կարող 500-անոց հեծելազոր ունենալ (տե՛ս Արտյոնյան Բ., Административное деление закавказских владений Сасанидского Ирана согласно труду Елишэ, "Кавказ и Византия", вып. I, Ереван, 1979, с. 30):

⁴ Յովհաննու Մամիկոնեանի եպիսկոպոսի Պատմութիւն Տարօնոյ, Վենետիկ, 1832, էջ 57-58: Այս տեղեկությունը գրեթե նույնությամբ կրկնվում է նաև այլ աղբյուրում (տե՛ս Պատմութիւն սրբոյն Ներսիսի և գիւտ նշխարաց, Սոփերք հայկականք, հ. է, Վենետիկ, 1853, էջ 43-44):

Վաղարշակը Աշոցքի տեր և Տաշիրի սեպուհ նշանակում է Հայկազն Գուշարի գավակներից, նշանակում է, որ մինչև Գուշարը և նրանից հետո էլ նշված գավառները չէին մտնում Գուգարաց բղեշխության մեջ: Վերջապես «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրությունում Գուգարքի գավառների թվարկման մեջ Վերին Ջավախքի հիշատակությունն իրոք ցույց է տալիս, որ Ջավախքի մյուս մասն էլ Հայկական մարզպանության մեջ էր¹:

Մեկ այլ տեղեկության մեջ Խորենացին Մեսրոպ Մաշտոցի լուսավորչական գործունեության մասին գրում է. «Հրաւիրի անտի (Գարդմանից- Հ. Խ.) ի բղեշխէն Գուգարացոց Աշուշայէ՝ յաղագս նորին գործոյ գալ յիւր իշխանութիւնն ի գաւառն Տաշրաց. ուր երթեալ՝ լաւագոյնս վարդապետեաց և հաստատագոյնս քան զամենայն աշակերտեալսն. առ որով ժամանակաւ Արծիլ ոմն էր կացեալ թագաւոր Վրաց»²: Պատմահայրը պարզ վկայում է, որ Տաշիրը ենթակա էր Գուգարաց Աշուշա բղեշխին, ու հենց Տաշիրում և ոչ թե բղեշխության ամբողջ տարածքում Մաշտոցի գործունեությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ Տաշիրը Աշուշայի ժառանգական տիրույթն էր՝ Ցուրտավ (Գաջենք) կենտրոնով³, որը նաև բղեշխության մայրաքաղաքն էր, որտեղ նա գործում էր ոչ թե պարսից պաշտոնյա, այլ ծնյալ իշխան: Պատմահայրը, ի տարբերություն այս նույն դեպքերի մասին պատմող Կորյունի, չի խոսում Վիրքում Մաշտոցի գործունեության մասին և սոսկ պատմելով Տաշիր գավառում կատարված դեպքերի մասին՝ հարևանցիորեն նշում է, որ այդ ժամանակ Վիրքում թագավորում էր ոմն Արծիլ: Այս վերջին տեղեկությունը կա՛մ ուշ շրջանի հավելում է, քանի որ այլ մանրամասներ պատմիչը չի հաղորդում, կա՛մ էլ ցույց է տալիս, որ Աշուշան ենթարկվում էր Վրաց թագավորին (հնարավոր է, որ Արծիլը նաև մարզպան էր), ինչը, դատելով տեղեկությունից, ձևական բնույթ է կրել:

Կորյունն էլ գրում է. «Յայնժամ իշխանին Տաշրացոց առն պատուականի և աստուածասիրի, որ անուանեալ կոչէր Աշուշայ, ի ձեռն տայր նմա զանձն ամենայն գաւառովն իւրով. և նորա ամենասպիւռ վարդապետութիւնն, ոչինչ պակասութեամբ քան զայլոցն գաւառաց

¹ Տե՛ս Մատենագիրք Հայոց, Բ հատոր, Ե. դար, Աթիլիաս-Լիբանան, 2003, էջ 2154:

² Սովստ Խորենացի, էջ 340-341:

³ Տե՛ս Մելիքսեթ-Քեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, Երևան, 1934, էջ 11, 12, ծմթ. 6: Ցուրտավի մասին Ուխտանեսը գրում է. «...աթոռ Եպիսկոպոսութեան տան Բղեշխի» (տե՛ս Ուխտանես Եպիսկոպոս, Հատուած երկրորդ, Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 36): Պատմիչը Ցուրտավի մասին նաև հայտնում է. «...Հայալեզու իշխանութեամբ Ցուրտաւայ եկեղեցոյր» (անդ, էջ 28):

անցուցեալ, և յանձն արարեալ զնոսա սրբոյ եպիսկոպոսին Սամուէլի, այնմ՝ զոր ի վերոյ նշանակեցաք, ինքն դառնայր ի կողմանս Յայոց Մեծաց...»¹: Տաշրաց իշխան Աշուշան Խորենացու Գուգարաց բղեշխն է: Կորյունի հաղորդումից միաժամանակ պարզվում է, որ Տաշիրը չէր մտնում Մեծ Յայքի թագավորության մեջ, քանի որ Մաշտոցը այդ գավառից անցնում է Մեծ Յայք: Սակայն ակնհայտ է, որ Վրաց կրճյուղ թագավորի և Վիրքում Մաշտոցի գործունեության մասին² խոսող Կորյունը Տաշիրը դիտում է Վիրքից անկախ շրջան, թեև Գուգարաց բղեշխն անվանում է Տաշրացիների իշխան, բայց Մաշտոցն իր վարդապետությունը տարածում է Տաշիրում, կամ էլ բղեշխության կենտրոն Տաշիրի անվան տակ հասկացվում էր բղեշխության ամբողջ տարածքը: Կարծում ենք, որ ելնելով Խորենացու և Կորյունի տեղեկություններից՝ կարելի է ենթադրել, որ Տաշիրի իշխաններն են եղել Գուգարքի բղեշխները, իսկ Գուգարքում իշխանական այլ տների գոյությունը³ հաստատում են աղբյուրները: Արդեն V դարի կեսերին Ղազար Փարպեցին Տաշրացիների իշխան Աշուշային անվանում է «բղեշխն Վրաց», «իշխանն Վրաց» կամ էլ նշում «յաշխարհն Վրաց»⁴, ինչն, անշուշտ, պայմանավորված էր Սասանյան արքունիքի կողմից Աշուշային Վրաց մարզպան նշանակելով⁵:

V դարի հայ պատմիչների երկերում կան տեղեկություններ, որոնք պահանջում են պարզաբանումներ: Այսպես, Եղիշեի տեղեկություններից պարզվում է, որ Վրաց մարզպանության սահմանը հարավ-արևելքում Աղվանից մարզպանության հետ անցել է Աղվանքի թագավորների ձմեռային նստավայր Խաղխաղ քաղաքից արևմուտք⁶, այսինքն երկու մարզպանությունները մասամբ բաժանվում էին Աղստև գետով: Եղիշեի մյուս տեղեկություններից պարզվում է, որ Տաշիրը մտնում էր Յայկա-

¹ Կորյուն, Պատմութիւն վարուց եւ մահուան սրբոյն Մեսրոպայ վարդապետի մերոյ քարգմանչի, Թիֆլիս, 1913, էջ 30:

² Անդ, էջ 29-30:

³ Օրինակ, հիշատակվում են Կողբի, Չորի իշխանները (տե՛ս «Փաւստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Յայոց», բնագիրը Զ. Պատկանյանի, Երևան, 1987, էջ 49, 247): Բ. Յարությունյանը Խորենացու տեղեկություններից ենթադրել է, որ Գուգարքում Գուշարյաններին ավելի ուշ փոխարինել է նոր ընտանիք որը սերում էր Ղարեհի նախարար ոմն Միիրդատի սերնդից (տե՛ս Յարությունյան Բ., Մեծ Յայքի բղեշխությունների և բղեշխության հաստատության շուրջ, «Յանդէս ամսօրեայ», 2001, թիվ 1-12, Վիեննա, էջ 134):

⁴ Տե՛ս Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Յայոց, թուղթ առ Վահան Մամիկոնեան, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մախասյանցի, Երևան, 1982, էջ 108, 120, 128, 138, 256, 266:

⁵ Տե՛ս Յարությունյան Բ., Մեծ Յայքի Գուգարք աշխարհը..., էջ 188-189:

⁶ Տե՛ս Եղիշէ, Վասն Վարդանայ եւ հայոց թատերագմին, աշխատասիրութեամբ Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1989, էջ 149-150:

կան մարզպանության մեջ, քանի որ Տաշիրի իշխան Վրենը հայոց ապստամբ բանակի հետ էր¹: Ինչպես տեսնում ենք, Եղիշեն աներկրս վկայում է, որ Տաշիրը Հայկական մարզպանության մասն էր: Այս նույն դեպքերի մասին խոսող Ղազար Փարպեցու տեղեկություններից նույնպես պարզվում է, որ Տաշիրը Աշոցքի հետ Հայկական մարզպանության մեջ էր², ընդ որում պատմիչի վկայությունները 481-484 թվականների ապստամբության մասին բացահայտում են որոշ հետաքրքիր մանրամասներ: Այսպես, Վրաց Վախթանգ թագավորից Վահան Մամիկոնյանին լուր է հասնում, թե Վրաց թագավորը հեռացել է Վրաց սահմանակից Հայոց լեռները³: Հայոց լեռների տեղորոշումն արդեն Փարպեցու մյուս տեղեկություններով միանշանակ ճշգրտվում է: Վահան Մամիկոնյանը զորքով բանակում է Կանգարք գավառի մի վայրում. «ուր պատրողական բանիք խաբէութեան թարթափեցուցանէր թագաւորն Վրաց Վախթանգ զմիտս զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնէի և զայլ աւագ տանուտերացն Հայոց...»⁴: Ինչպես տեսնում ենք, Հայոց լեռների շրջանը Կանգարք գավառն է, հետևաբար Հայոց լեռները Կանգարքի կամ Մթին լեռներն են (ներկայիս Ջավախքի լեռնաշղթան)⁵, որոնք, անկասկած, Հայկական մարզպանության մասն էին հանդիսանում: Կանգարքից իջնելուց հետո միայն ճարմանայնու դաշտը Կուրի հարավային ափին արդեն Վրաց մարզպանության մեջ էր, քանի որ ճարմանայնու դաշտ իջնելուց հետո Հայոց իշխաններից ոմանք «ոչ յաջող համարէին զէջո գնդին Հայոց ի Վիրս»⁶: Եթե Տաշիրի հարևանությամբ գտնված Կանգարքը⁷ մտնում էր Հայկական մարզպանության մեջ, հետևաբար վերջինիս մեջ էր նաև Տաշիրին հարևան մեկ այլ գավառ՝ Աշոցքը⁸: Փարպեցու այս հաղորդումը թույլ է տալիս ժխտել այն կարծիքը, թե իբր Կանգարքը 387 թվականից մինչև IX դարը գտնվում էր Վրաց աշխարհի կազմում⁹: XI դարի վրացական աղբյուրը Կանգարքի մասին ունի հե-

¹ Անդ, էջ 202, 388:

² Տե՛ս Ղազարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց, էջ 102, 176, 204:

³ Անդ, էջ 320:

⁴ Անդ, էջ 322:

⁵ Ուխտանէս պատմիչը գրում է. «...զձեր Գայլ Պետրոսն սպանին Իշխանքն մեր ի վերայ լերինն՝ որ կոչի Կանգարք» (տե՛ս Ուխտանէս եպիսկոպոս, Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց, էջ 91):

⁶ Ղազարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց, էջ 322:

⁷ Տե՛ս Յովհաննու կաթողիկոսի Դրապխանակերտցույ պատմութիւն Հայոց, աշխարհաբար թարգմ. և ծանոթ. Գ. Բ. Թոսունյանի, Երևան, 1996, էջ 232:

⁸ Անդ, էջ 198:

⁹ Տե՛ս Աղոնց Ն., նշվ. աշխ., էջ 252; Երեմյան Ա., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 57: Բ. Ուլուբաբյանը Կանգարքը Վրաց մարզպանության մեջ չէր տեսնում (տե՛ս Ղազարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց, էջ 506, ճմբ. 115):

տաքրքիր տեղեկություններ: Այսպես, V դարի վերջին Պետրոս Թափիչ Անտիոքացին գալիս է Հայոց, այնուհետև Վրաց երկիրը և «ապա գոռոզացյալ այն Պետրոսը եկավ Կանգարք և իրեն մոտ կանչեց երանելի Միքայել Վրաց (Քարթլի) կաթողիկոսին, որպեսզի վերջինս կամ նրա վարդապետությունը (կրոնը) ընդունի կամ, եթե հրաժարվի, հեռանա արձից: Իսկ սուրբ հոգին զինեց Միքայելին, ինչպես երբեմն Դավթին Պոլիաթի վրա: Եվ ելավ Միքայելը Սցխեթից իրեն ենթակա եպիսկոպոսներով և քահանաներով ու հավատացյալ ժողովրդով հանդերձ. և մոտեցան Կանգարաց երկրին»¹: Տեղեկությունից պարզվում է, որ Հայոց երկրից հետո Վիրքում լինելու մասին հատվածը ընդմիջարկության տպավորություն է թողնում, քանի որ շարադրանքից պարզվում է, որ Կանգարքը ո՛չ եկեղեցական, ո՛չ էլ վարչաքաղաքական առումով չի մտել Վրաց մարզպանության մեջ: Մի կողմից՝ Պետրոս Թափիչը, գալով Կանգարք, չի անցնում Վրաց մարզպանության սահմանները, մյուս կողմից՝ ակնհայտ է, որ Միքայել կաթողիկոսի հոգևոր իշխանությունը չի տարածվել Կանգարքի վրա, հետևաբար Կանգարքը Հայկական մարզպանության մեջ էր: Կանգարքը հիշատակում է նաև կեղծ Շապուհ Բագրատունին՝ գրելով, որ X դարի սկզբին Սմբատ Ա-ն գրավում է արխազական թագավորության մեջ մտած Կանգարքը և մի քանի այլ գավառներ, որոնք մոտ էին Շիրակ գավառին²:

Եղիշեի և Փարպեցու՝ Տաշիրի մասին տեղեկությունների համեմատությունը Մովսես Խորենացու Տաշրաց սեպհականության մասին հաղորդման հետ թույլ է տալիս ենթադրել, որ Տաշիրի հարավային մասը՝ Տաշրատավիլը³, անջատվելով Գուգարք աշխարհի Տաշիր գավառից, ինչ-ինչ պատճառներով մնացել էր Հայկական մարզպանության

¹ Մելիքսեթ-Քեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, էջ 115: Պետրոս Թափիչի և Պետրոս հայոց եպիսկոպոսի շփոթի մասին տես անդ, էջ 117, ճնթ. 11:

² Տես Պատմութիւն Շապիոյ Բագրատունւոյ, ի լոյս ածին Գ. Տեր-Մկրտչեան եւ Մեսրոպ եպիսկոպոս, Եջմիածին, 1921, էջ 80, 83: Բ. Յոլսընի կողմից Կանգարքի տեղադրությունը Աշոցքից հյուսիս՝ Վերին Ջավախքի արևմտյան մասի և Թեղքի միջև (տես Hewsen R., The Vitaxates of Arsacid Armenia. A Reexamination of the Territorial Aspects of the Institution (Part Two), "Revue des Études Arméniennes", t. XXII, Paris, 1990-91, p. 165-169), Մթին կամ Կանգարքի լեռներից արևմուտք, անընդունելի է, քանի որ նշված տարածքը մտել է Ջավախքի մեջ, որի մի մասը Աշոցքի տերության մեջ էր (տես Հարությունյան Բ., Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ, Երևան, 2001): Կանգարքի և Թեղքի հարևանության մասին հաստատում է նաև XI դարի վրացական աղբյուրը (տես Մելիքսեթ-Քեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, էջ 207; Картелис Цховреба (История Грузии), глав. ред. акад. Р. Метревели, Тбилиси, 2008, с. 158):

³ Տես Հարությունյան Բ., Մեծ Հայքի բղջիսությունների և բղջիսության հաստատության շուրջ, էջ 120, 165:

մեջ: Դեռևս Տաշիրի հարավային մասն է, որ Ս. Երեմյանի մոտ կոչվում է Տաշիր Վերին, որն ընդգրկում էր Փամբակ գետի հովիտը՝ Բամբակաձորը, Տանձուտ կենտրոնով¹: Ըստ էության ուսումնասիրողը Վրեն Տաշրացու անունն ընկալել է որպես Վերին Տաշիր գավառ և այն ներառել Այրարատ նահանգի մեջ, երբ Փամբակ գետի հովիտը մտնում էր Նիս գավառի մեջ²: Փամբակ գետի հովտում այսպես կոչված Վերին Տաշիր գավառի տեղադրության համար աղբյուրագիտական հիմք կարող է հանդիսանալ Վարդան վարդապետի այն տեղեկությունը, թե «Տաշրացուց գաւառն Բամակի ձորն է, ուր կայ սուրբ ուխտն Որդածորու սուրբ Նշանն»³: Ելնելով Հաղբատի մոտ Որդածոր ուխտատեղիի տեղադրությունից⁴ կարող ենք եզրակացնել, որ Փամբակաձորի անվան տակ հեղինակը նկատի ունի Ձորագետը, որը Տաշրաց սեպհականության մեջ էր, հետևաբար հենց Փամբակ գետի հովտում Վերին Տաշիր գավառի տեղադրությունն անընդունելի է: Նիզից հյուսիս, Բագունի լեռների և Վիրահայոց լեռների միջև գտնվում էր Տաշիրի հարավային մասը՝ Տաշրաց սեպհականությունը, որը Հայկական մարզպանության մեջ էր: Ըստ Ս. Երեմյանի՝ Տաշիր գավառը Գուգարաց բղեշխների տոհմի կրտսեր ճյուղի՝ սեպուհների ժառանգությունն էր, ուստի կոչվում էր «Սեպհականութիւն Տաշրայ», որի կենտրոնը գտնվում էր Օձուն գյուղում և ընդգրկում էր Խորհրդային Հայաստանի Ստեփանավանի, Կալինինոյի շրջանները ու Ալավերդու շրջանի հարավային հատվածը⁵: Ընդհանուր առմամբ համաձայնվելով ուսումնասիրողի հետ՝ մշենք, որ հիշյալ տարածքները մաս են կազմել Տաշիր գավառի՝ Տաշրաց սեպհականության, քանի որ Տաշիրն ընդգրկում էր ավելի մեծ տարածք՝ ձգվելով դեպի հյուսիս: Տաշրաց սեպհականությունը հայտնի էր ուշ

¹ Տե՛ս Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 85:

² Տե՛ս Հարությունյան Բ., Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ: Կանգարքի տեղադրությունը Փամբակի ձորում ընդհանրապես քննություն չի բռնում, քանի որ նման տեղադրությամբ արհեստականորեն ընդարձակվում է Գուգարքի սահմանը հարավում (տե՛ս Мусхелишвили Д., Из исторической географии Восточной Грузии (Шаки и Гогарена), Тбилиси, 1982, с. 7, 9), այսինքն ըստ վրաց ուսումնասիրողի, Իբերիայի հարավային նահանգի տարածքը: Նույն միտումներով հեղինակը Գուգարքի մեջ է ներառում նաև Աշոցքը (անդ, էջ 6 և հաջ.):

³ «Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի», քննական հրատարակութիւն Գ. Պերպերեանի, Բարիզ, 1960, էջ 35: Դեղինակը այլ տեղեկությունների մեջ գրում է. «Տաշիր Լոռի է, ուր կան սուրբ ուխտն Հաղբատ եւ Սանահին, ուր կայ տապանն սուրբ պատրիարզին Հայոց Յովհաննու Օձնեցոյն» (անդ, էջ 17): Նաև՝ «Տաշիր Լոռի է, ուր կայ Քոբարն, եւ Դոռոմայրի սուրբ Նշանն, եւ Յոհան Օձնեցոյ գերեզմանն...» (անդ, էջ 35):

⁴ Տե՛ս Ղաֆաղարյան Կ., Հաղբատ, Երևան, 1963, էջ 194, 213:

⁵ Տե՛ս Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 85:

չոջանի իր նշանավոր վանքերով ու ուխտատեղիներով (Հաղպատ, Սանահին), որոնց մասին բազմիցս խոսում են հայ պատմիչները¹:

«Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրությունում Կանգարքը ներառված է Վիրքի կազմում և հիշատակվում է Թռեղքից ու Տաշիրից հետո, «որոց 'ի հարաւ Գանկարքա. զամէնդ 'ի Հայոց հանեալ է»²: «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության մեջ հիշատակված Թռեղքն ու Տաշիրը ցույց են տրված Կանգարքից հյուսիս, ուրեմն Տաշիրի նույնացումը Տաշրաց սեպհականության հետ բացառվում է, իսկ «Աշխարհացոյց»-ի ընդարձակ և համառոտ խմբագրություններում Գուգարքի նկարագրության մեջ Տաշիրի հիշատակությունը առանց Մանգլեաց փոր, Քուեշափոր, Բողնոփոր գավառների³ ցույց է տալիս, որ Տաշիրն ընդգրկում էր հիշյալ գավառների տարածքը, որոնց առաջացումը կապված էր ավատատիրական հարաբերությունների զարգացման հետ: Ինչ վերաբերում է «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրությունում Վրաց մարզպանության նկարագրության մեջ Տաշիրի և Մանգլեացփորի, Քուեշափորի⁴ ու Բողնոփորի համատեղ հիշատակությանը, ապա այստեղ Տաշիրը Թռեղքի հետ միասին հիշատակվելով՝ կապվում է ավելի մեծ տարածքի հետ՝ ընդգրկելով նաև հիշյալ երեք գավառները⁵: Հենց այսպիսի աշխարհագրական լայն ընդգրկմամբ հայերենախոս Տաշիրը Չորափորի և Գարդմանի հետ հիշատակվում է 572 թվականին⁶, ընդ

¹ Այդ տեղեկությունները տես Մաթևոսյան Ռ., Տաշիր-Չորագետ, Երևան, 1982, էջ 43 և հաջ.:

² Աշխարհացոյց Մովսեսի Խորենացոյ յաւելուածովք նախնեաց, հրատ. Ա. Սուքրեան, Վենետիկ, 1881, էջ 28: Տես նաև Մատենագիրք Հայոց, Բ հատոր, Ե. դար, էջ 2150-2151: Գուգարքի գավառների հիշատակման մեջ ունենք Տաշիր, Թռեղք, Կանգարք, Վերին Ջավախք թվարկումը (Մատենագիրք Հայոց, Բ հատոր, Ե. դար, էջ 2154): «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրություններում Կանգարքը հիշատակված է Թռեղքի և Տաշիրի միջև կամ էլ Տաշիր, Թռեղք, Կանգարք, Արտահան հերթականությամբ (տես Արրահամյան Ա., Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 348, 350; Патканов К. П., Армянская География VII века, СПб, 1877, с. 40, 52. Հավելված՝ «Աշխարհացոյց է դարու», էջ 17, 20):

³ Տես նաև Մատենագիրք Հայոց, Բ հատոր, Ե. դար, էջ 2154, 2172, 2188:

⁴ «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրությունում գրված է. «...զՄանգլեացփոր, և զԲողնոփոր՝ մինչեւ ցՊարուար գաւառ, որ պատէ զՏփիսիս քաղաքաւ. բայց երեք փորակդ ի Հայոց հանեալ է» (տես Մատենագիրք Հայոց, Բ հատոր, Ե. դար, էջ 2150): Այս հատվածում անհրաժեշտ է վերականգնել Քուեշափոր գավառի անունը (տես Հարությունյան Բ., Մեծ Հայքի Գուգարք աշխարհը..., էջ 193-194):

⁵ Տես Հարությունյան Բ., Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ:

⁶ Տես Բարթիկյան Հ., "Narratio de rebus Armeniae", հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ-քաղկեդոնական սկզբնաղբյուր, «Բանբեր Մատենադարանի», 1962, թիվ 6, էջ 466:

որում Տաշիրը և Ձորափորը Վրաց մարզպանության, իսկ Գարդմանն էլ Աղվանից մարզպանության կազմում լինելը ձևական բնույթ է ունեցել, քանի որ, դատելով աղբյուրից, հիշյալ գավառները իրենց նախարարական տներով լիովին ինքնուրույն քաղաքականություն են վարել:

Հայկական մարզպանության հյուսիսային սահմանի մասին կարևոր տեղեկություններ են հաղորդում վրաց մատենագիրները և այս առումով առաջին հերթին կարևորում ենք «Վախթանգ Գորգասալի պատմությունը», որը չնայած իր առասպելաբանական բնույթին և ժամանակագրական վայրիվերումներին, որտեղ յուրաքանչյուր տեղեկություն պահանջում է առանձին քննություն, կարծում ենք, զգույշ քննության դեպքում կարող է հանգեցնել պատմաաշխարհագրական որոշ հետաքրքիր իրողությունների բացահայտման: Այսպես, Կղարջքը և Ջավախքը, ըստ Ջվանշիրի, հանդես են գալիս որպես առանձին վարչական միավոր¹, ընդ որում այս տեղեկությունը վերաբերում է VI-VII դարերի պատմական դեպքերին (օրինակ, Գուարամ կյուրոպաղատի գործունեությունը): Այստեղ մեզ համար կարևոր է նկատի ունենալ, որ անկախ վրաց պատմիչի անձնական մոտեցումներից՝ Կղարջքը և Ջավախքը միասին հիշատակելը խոսում է Վրաց մարզպանության վարչական ինչ-ինչ բաժանումների մասին, որը լիովին հնարավոր էր 523 թվականին Վրաց թագավորության վերացումից հետո, և այս առումով հետաքրքիր է, որ Գուգարաց բղեշխության տարածքը ևս մասամբ ենթարկվել էր վարչական փոփոխությունների: Համաձայն նույն Ջվանշիրի՝ Արչիլը (VIII դարի կես) իր մոտ է կանչում Քարթլիի իշխաններին և նրանց կնության է տալիս իր զարմուհիներին. նրանցից մեկին տալիս է Գուարամ կյուրոպաղատին, որը տիրում էր Կղարջքին և Ջավախքին, իսկ մյուսին՝ Պերոզի ազգական պիտիախչին (բղեշխին), որն իշխում էր Թռեղքում, Տաշիրում և Աբոցում (Աշոցքում), երրորդին՝ Ներսե (Ներսես) Ներսիանին, որը Վախթանգ թագավորի նշանավոր մեծատոհմիկների զարմից էր և այլն²: Այս վերջին տեղեկությունն, անշուշտ, վերաբերում է նաև ավելի ուշ ժամանակների պատմական իրադարձություններին, սակայն պարունակում է նաև վաղ ժամանակների վարչաքաղաքական որոշ իրողություններ: Օրինակ, Աշոցքի ներառումը Թռեղքի և Տաշիրի, ի մեջ առյալ թերևս նաև Տաշրաց սեպիականությունը, հետ մեկ վարչամիավորի մեջ մարզպանական շրջանի համար անընդունելի է և կապվում է VIII-IX դարերում տեղի ունեցած դեպքերի հետ, երբ կարճ ժա-

¹ Տե՛ս Կարլիս Ըջօրեբա, с. 105, 111:

² Անդ, էջ 111: Տե՛ս նաև Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, էջ 195:

մանակով, ըստ «Քարթլիի մատյանի», Աշոցքը մտավ Աշոտ կյուրոպահատի որդի Գուարամի իշխանության մեջ¹, իսկ մարզպանական շրջանում Աշոցքը Հայկական մարզպանության մեջ էր: Ինչ վերաբերում է Լեոնտի Մրովելու այն տեղեկությանը, որ Փառնավազը (մ. թ. ա. 270-ական թվականներ) թագավորությունը բաժանելով ութ էրիսթավների միջև և Եշանակելով մեկ սպասապետ՝ չորրորդին որպես իշխան ուղարկեց Սամշվիլդե՝ տալով նրան Սկվիլդեթ գետից մինչև Լեոնտերը, այսինքն՝ Տաշիրը և Աշոցքը², ապա այս իրադարձությունները հնարավոր էին մ. թ. ա. III դարի 70-ականներին, երբ Վիրքի նորաստեղծ թագավորությունը հզորանալով՝ կարողացել էր գրավել Մեծ Հայքի հյուսիսային շրջանները: Այս հաղորդման մեջ հավանական չէ նաև Տաշիրի գրավումը Վիրքի կողմից, քանի որ Մրովելին, խոսելով Արտաշես Ա և Փառնաջոմ հակամարտության մասին³, գրում է, որ «Քարթլիի ուրացած իշխաններն ընդամաք զնացին հայոց թագավորին Տաշիրում, և այնտեղ էին ժողոված շատ հայեր և վրացիներ: Իսկ Փառնաջոմն նույնպես դիմեց այնտեղ՝ Տաշիր»⁴, այսինքն վրաց հեղինակը պարզ հաստատում է, որ Տաշիրը Մեծ Հայքի մեջ է: Անկասկած, Աշոցքի գրավումը ևս բացառվում է, և կարելի է կարծել, որ Աշոցքի անվան տակ վրաց հեղինակը թերևս նկատի ունի Ջավախքի այն մասը, որը, դաստեղծվելով հորենացու տեղեկություններից, մտնում էր Աշոցքի տեղության մեջ: Այս ենթադրությունը հավանական է այն առումով, որ նույն Փառնավազը հինգերորդ էրիսթավին որպես իշխանություն տալիս է Ծունդան՝ Փանավարից մինչև Կուրի վերնագավառ ընկած շրջանը, այսինքն՝ Ջավախքը, Կողը և Արտահանը⁵: Քինգերորդ էրիսթավի իշխանությունը, փաստորեն, ըստ Մրովելու՝ տարածվել է Փարվանա լճից արևմուտք՝ ընդգրկելով Ջավախքը (որն ըստ «Վասխթանգ Գորգասալի պատմության» նույնպես տարածվում էր Փարավանից (Փարվանա) մինչև Կուր⁶), Տայքի Կող գավառը, որը գտնվել է

¹ Տե՛ս Матиане Картелиса, перевод, введение и примечания М. Д. Лордкипанидзе, Тбилиси, 1976, с. 31.

² Տե՛ս Картелис Цховреба, с. 24. Այս տեղեկությունը գրեթե նույնությամբ հիշատակվում է նաև Վախտուշտի Բագրատիոնի կողմից (տե՛ս Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 9, (ԺԸ--ԺԹ դդ.), Երևան, 1955, էջ 32): Հեղինակը չի հիշատակում Տաշիրը, սակայն Աշոցքի հիշատակությամբ արդեն Տաշիրը ևս ներառված է այն տարածքում:

³ Տե՛ս Меликишвили Г., К истории древней Грузии, Тбилиси, 1959, с. 50.

⁴ Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, էջ 152: Վերջինս Կարտլիս Ծховреба, с. 27.

⁵ Տե՛ս Картелис Цховреба, с. 24.

⁶ Անդ, էջ 103:

Հայկական մարզպանության մեջ¹, և Արտահանը: Այդուհանդերձ, ինչպես տեսանք վերևում, ըստ «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության՝ Ջավախքի մյուս մասը V դարում և հետո էլ Հայկական մարզպանության մեջ էր: Իսկ Սրովելու հաղորդումը Փառնավազի գործունեության մասին, ըստ էության, նրա մեկ այլ տեղեկության որոշակի կրկնությունն է, համաձայն որի Քարթլոսի կինը թագավորությունը բաժանում է իր հինգ որդիների միջև, որոնցից Գաչիոսին տալիս է Օրբիս-ժիղեն՝ Սկվիրեթի գետից (ներկայումս՝ Վեռա գետը Թբիլիսիի մոտ) մինչև Աշոցքի սահմանը², այսինքն՝ հեղինակը Սամշուղեն և Տաշիրը կրկին համարում է մեկ վարչական միավոր, սակայն այս անգամ արդեն առանց Աշոցքի: Հարկ է նշել, որ Սամշուղեն որոշ դեպքերում հիշատակվում է որպես առանձին վարչական միավոր V դարի սկզբներին և Վախթանգ Գորգասալի ժամանակ³: Որպես առանձին իշխանություն՝ Սամշուղեն իր տարածքով համապատասխանում է Գուգարքի Մանգլեաց փոքր գավառին, որտեղ հարևան Բողնոփորի հետ միասին Վախթանգի կողմից հաստատվում են եպիսկոպոսություններ և հենց Մանգլիս կամ Մանգլիսի ձոր անունով էլ երբեմն հանդես է գալիս սկզբնաղբյուրներում⁴: Ընդհանրապես «Վախթանգ Գորգասալի պատմության» մեջ հիշատակված պատմաաշխարհագրական և վարչաքաղաքական իրողությունների համեմատությունը V դարի հայ մատենագիրների համապատասխան տեղեկությունների հետ բացահայտում է Վրաց և Հայկական մարզպանությունների վարչական բաժանման մի համակարգ, որն արդեն Վախթանգ Գորգասալից հետո ենթարկվեց վարչաքաղաքական նոր փոփոխությունների, ինչը և արտացոլվեց ավելի ուշ ժամանակներին վերաբերող պատմական տեղեկություններում: Այստեղ առաջին հերթին ուշադրություն ենք հրավիրում այն պատմաաշխարհագրական տեղեկություններին, որոնց ուշադիր քննությունը ցույց է տալիս Վրաց մարզպանության հարավային սահմանում տեղի ունեցած փոփոխությունները: Այսպես, Վախթանգի պատմության սկզբին վերաբերող տեղեկությունները ակնհայտ ցույց են տալիս այնպիսի վարչաքաղաքական կացություն, որը ստիպում է վերանայել Հայկական մարզպանության հյուսիսային սահմանին առնչվող հարցերը:

¹ Տե՛ս Աշխարհացոյց Մովսեսի Խորենացույ յաւելուածովք նախնեաց, էջ 28, 35; Արրահամյան Ա., Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 350 (քննադրում՝ Կողբերաց փոր); Патканов К., Армянская География VII века, с. 53. Հավելված՝ «Աշխարհացոյց է դարու», էջ 20:

² Տե՛ս Կարտլիս Ըջօրեբա, с. 16.

³ Անդ, էջ 76, 95:

⁴ Անդ, էջ 100, 107, 111:

Դետաքրքիր է, օրինակ, որ Վախթանգին ենթակա իշխանությունները և եպիսկոպոսությունները հարավում սահմանագծվում են Խունանով, Սանձվիլդեով, Կղարջքով, Ծունդայով, Օծրխեով, Էրուշեթի Արտահանով, Մանգլեաց փորով, Բողնոփորով¹: Ինչպես տեսնում ենք, նշված իշխանությունների և եպիսկոպոսությունների քարտեզագրումը բացառում է Կուրի ակունքներից մինչև Խունան ընկած² Քարթլիի (իմա՝ Վրաց մարզպանության) սահմաններում ներառել Աշոցքը, Տաշիրը, Կանգարքը: Եվ երբ Վախթանգը իր որդիներին է տալիս Տասիսկարից և Ծունդայից մինչև Սոմխիթի և Յունաստան (իմա՝ Բյուզանդական կայսրություն) ընկած տարածքները³, ապա այդ տարածքները Սոմխիթի ուղղությամբ հասնում էին մինչև Աշոցք, Տաշիր, Կանգարք: Տասիսկարիի հիշատակությամբ, որը Բորժոմի լեռնանցքն է, Թեղքը ցույց է տրված Վրաց մարզպանության սահմաններում, հետևաբար Ղազար Փարպեցու կողմից Կանգարքի ներառումը Չայաստանի մեջ միանշանակ համապատասխանում է պատմական իրականությանը: Ուրեմն V դարի վերջին Կանգարքը դեռևս Վրաց մարզպանության մեջ չէր, և «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրությունում Թեղքից ու Տաշիրից հետո հիշատակված «որոց 'ի հարաւ Գանկարքա. զամէնդ 'ի Չայոց հանեալ է»⁴ նախադասության սկիզբը հետագա ընդմիջարկություն է: Վրաց մարզպանության վարչական բաժանման այն պատկերը, որ ունենք համաձայն «Աշխարհացոյց»-ի, կազմված էր Վրաց թագավորությունից, Գուգարաց բղեշխությունից, մարզպանի անմիջական ենթակայության տակ գտնվող և պարսից արքունիքին պատկանող կալվածներից⁵: Վասակ Սյունեցուց հետո պարսից արքունիքը Վրաց մարզպանի պաշտոնը հանձնում է Գուգարաց բղեշխին, որի իշխանությունը տարածվում էր Յունարակերտ ամրոցից մինչև ճորոխ գետի ստորին հոսանքը⁶: Այս քայլով արդեն Վիրքի նկատմամբ Գուգարաց բղեշխի հակակշիռ նշանակությունը և իշխանատենչությունը⁷ էլ ավելի գործնական հիմքի վրա

¹ Անդ, էջ 78, 95, 100: 451 թվականի Քաղկեդոնի եկեղեցեական ժողովը նգովում է նաև Վրաց եկեղեցին, որում հիշատակվում են Յուրտավի, Բողնիսի, Մանգլեաց, Քունանակերտի (Յունարակերտ) եպիսկոպոսները (տե՛ս «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 183, 194): Ծիղկանի եպիսկոպոսությունը թերևս «յերկիրն Թեղեաց, որ է Ծաղկաց» է (տե՛ս Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Չայաստանի և հայերի մասին, հ. Ա, էջ 153):

² Անդ, էջ 78:

³ Անդ, էջ 102:

⁴ Աշխարհացոյց Մովսեսի Խորենացույ յաւելուածովք նախնեաց, էջ 28: Տե՛ս նաև Մատենագիրք Չայոց, Բ հատոր, Ե. դար, էջ 2150-2151:

⁵ Տե՛ս Չարությունյան Բ., Մեծ Չայքի Գուգարք աշխարհը..., էջ 188:

⁶ Անդ, էջ 188-189:

⁷ Անդ, էջ 185:

դրվեց: Եվ շուտով այդ հակամարտության հետևանքով Վախթանգ Գորգասալը սպանում է Աշուշայի հավատուրաց որդի Վազգենին¹: «Վախթանգ Գորգասալի պատմությունը» այս իրադարձությունը կապում է Բակուր թագավորի հետ, որի օրոք Յայքում՝ Գուգարքում, կար մի իշխանաց որդի Վազգեն անունով, որը ուրացել էր քրիստոնեական կրոնը և պարսից թագավորի կողմից նշանակվել Ռանի՝ Աղվանքի իշխան՝ Վազգենի նշանակվելը Աղվանքի իշխան, այսինքն՝ մարզպան, միանգամայն հնարավոր է, քանի որ Վասակ Սյունեցին ևս եղել էր Վիրքի և Աղվանքի մարզպան³: Վիրքի ու Աղվանքի վարչական մեկ միավոր լինելու մասին վկայում է նաև սասանյան ժամանակաշրջանի կնիքներից մեկը (Arran ud Wirozān āmārgar=Առանի և Վիրքի համարկար)⁴, որը, թերևս, թվագրվում է հենց V դարով: Հետաքրքիր է, որ Վազգենի սպանության մասին, ըստ Ղազար Փարպեցու, լսեցին «Հայոց աշխարհիս մարդկան, յորոց բազումք այն ամ յԱղուանս էին, յապստամբ անրականացն կռուի, որոց բովանդակին զօրագլուխ էր Ջարմիր Հազարաուխտ»⁵: Այս տեղեկությունը կարծում ենք, որ կապված է Վազգենի սպանության հետ և թերևս Վազգենի սպանությունից հետո Վախթանգին կամ վերջինիս կողմն անցած բերդերն են ապստամբել պարսիկների դեմ: «Վախթանգ Գորգասալի պատմության» մեջ V դարի սկզբին Աղվանքի և Քարթլիի սահման է նշված Բերդուջ գետը⁶, ներկայիս Դեբեդը, ինչն այդ ժամանակաշրջանի իրադարձությունների հետ չի կապվում, քանի որ երկու մարզպանությունները մասամբ բաժանվել են Աղստև գետով: Մեր կարծիքով, այս տեղեկությունը կարելի է կապել Վախթանգի և Վազգենի ժամանակաշրջանի անցքերի հետ, երբ վերջինիս նաև Աղվանքի մարզպան նշանակվելով՝ նրա բղեշխական տիրույթների մի մասը՝ Չորոփոր, Կողբոփոր գավառները հարավում Հունարակերտով, մինչև Դեբեդ վարչական առումով կարճ ժամանակով ներառվում են Աղվանից մարզպանության մեջ: Ըստ այդմ էլ Ղազար Փարպեցին Աղվանքի ասելով հասկանում է այս տարածքը, ընդ որում, Գուգարքի և Ուտիքի սահմանին գտնված Հունարակերտի շրջանը այդպես կարող էր հաս-

¹ Տե՛ս Ղազարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց, էջ 286:

² Տե՛ս Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Ի. Ա. էջ 193; Կարտլիս Ըջօրեբա, Կ. 104.

³ Ղազար Փարպեցին Վասակի մասին գրում է, որ վերջինս Վրաց մարզպանն էր և Աղվանից դուռը (իմա՝ ճորա պահակը) նրա ձեռքում էր (տե՛ս Ղազարայ Փարպեցու Պատմութիւն Հայոց, էջ 196):

⁴ Տե՛ս Хуршудян Э., Армения и сасанидски й Иран, Алматы, 2003, Կ. 230-231

⁵ Ղազարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց, էջ 286:

⁶ Տե՛ս Կարտլիս Ըջօրեբա, Կ. 75.

կացվել¹: Վազգենի սպանությունից հետո Աղվանքում (Ռանուն և Մովականում) նշանակվում է նոր մարզպան, որը վրացիների հետ պետք է կանոնավոր հարաբերություններ հաստատեր²: Այսպիսի վարչաքաղաքական փոփոխությունները, որոնք միանգամայն հնարավոր էին Այսրկովկասում V դարի վերջին, պայմանավորված էին հենց հայ ժողովրդի Սասանյան Պարսկաստանի դեմ ուղղված հաղթական ապրտամբությամբ: Անշուշտ, այս փոփոխությունները «Վախթանգ Գորգասալի պատմություն»-ում արտացոլվել են այլ լույսի ներքո, որտեղ պատմականը ծածկված է առասպելով կամ խիստ գաղափարականացված միտումներով, սակայն ուշադիր քննությունը թույլ է տալիս կատարել եզրակացություններ, որոնք հաստատվում են այդ ժամանակաշրջանի հայկական աղբյուրների տեղեկություններով: Այսպես, Սասանյան Պարսկաստանի բաժանումը չորս մասերի վերագրվում է Խոսրով Ա Անուշիրվանին (531-579)³, չնայած V դարի «Աշխարհացոյց»-ում արդեն Իրանը բաժանված է չորս քուստերի: Ն. Արոնցը կարծում է, որ այս բաժանումը գոյություն ուներ նախքան Խոսրով Ա Անուշիրվանը⁴: Բդեշխների ինստիտուտը, ըստ էության, նույնպես դադարում է գոյություն ունենալ Խոսրով Ա Անուշիրվանի բարեփոխումներից հետո, իսկ Գուգարաց բդեշխների իշխանությունը վերանում է V դարի վերջին⁵: Սասանյան Պարսկաստանում տեղի ունեցող այս բոլոր վարչական փոփոխություններն այս կամ այն ձևով պահպանվել են նաև «Վախթանգ Գորգասալի պատմության» մեջ: Օրինակ, նշված աղբյուրում կարդում ենք, որ պարսից թագավորը Վախթանգին կնության է տալիս իր դստերը և որ-

¹ Խորենացին գրում է, որ Սիսակից սերված գունդը ժառանգում է Աղվանից դաշտը և այս դաշտի լեռնակողմը, Երասխ գետից մինչև Զնարակերտ կոչված ամրոցը (տե՛ս Մովսես Խորենացի, էջ 113): Մեկ այլ տեղեկության մեջ պատմիչը նաև գրում է. «Իսկ Դուշարայ, որ յորդուցն Շարայի, ժառանգեաց զլեռնն Մթին, որ է Կանգարք, և զկէս մասինն Զաւախաց, զԿողբ, զԾոր, զՉոր, մինչև ցամուրն Զնարակերտ»: Դատելով Խորենացու տեղեկություններից՝ Զնարակերտը սկզբում գտնվել է Ուտիքի կազմում, ավելի ուշ արդեն մտել է Գուգարքի մեջ: Աղվանքի սահմանը «ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն Զնարակերտ» նշում է նաև Կաղանկատվացին (տե՛ս Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը Վ. Առաքելյանի, Երևան, 1983, էջ 8): Իսկ Զովհաննես Դրասխանակերտցի պատմիչը գրում է. «և զՈւտի գաւառ մինչև ՚ի քաղաքն Զունարակերտ և մինչև ՚ի Տուս և ՚ի Շամքոր» (տե՛ս Զովհաննես Դրասխանակերտցի, էջ 164):

² Տե՛ս Կարտլիս Աջօքրեբա, с. 104.

³ Տե՛ս Nöldeke Th., Geschichte der Perser und Araber aus der arabischen Chronik des Tabari, Leyden, 1879, S. 155; Christensen A., L'Iran sous les Sassanides, Copenhagen, 1944, p. 370.

⁴ Տե՛ս Արոնց Ն., նշվ. աշխ., էջ 243-244:

⁵ Տե՛ս Новосельцев А., Генезис феодализма в странах Закавказья, Москва, 1980, с. 111,

պես օժիտ Սոմխիթին (Չայքը, այսինքն՝ Գուգարքը) ու կովկասյան բոլոր թագավորներին¹: Այս հաղորդումը աներկբա վկայում է Վրաց մարզպանության ձևավորման մասին, ինչը Ջվանշիրը կապում է Վախթանգի ամուսնության հետ:

Այսպիսով, ի մի բերելով կատարված քննության արդյունքները և վերանայելով մասնագիտական գրականության մեջ մինչև այժմ գրեթե գերիշխող տեսակետը՝ կարող ենք եզրակացնել, որ 387 թվականի Սեծ Չայքի բաժանումից հետո Գուգարաց բղեշխությունը, պահպանելով Վրաց թագավորից իր ինքնուրույն և գրեթե անկախ վիճակը, Վրաց թագավորության հետ կազմում են Վրաց մարզպանությունը: Ընդ որում, եթե բղեշխության մաս կազմող Կանգարքն ավելի քան հարյուր տարի շարունակ դեռևս Չայկական մարզպանության մեջ էր, ապա Ջվանշիրի մյուս մասը, Տաշրաց սեպհականությունը և Աշոցքը Սասանյան Պարսկաստանի տիրապետության ողջ ընթացքում կազմում են Չայկական մարզպանության անբաժանելի մասը:

Оганнес Хорикян, К вопросу о северной границе Армянского марзпанства.- После раздела в 387 г. Великой Армении Гугаркское бдешхство, сохраняя самостоятельность и почти независимое положение от царя Иверии, составило вместе с Иверийским царством марзпанство Иверия. При этом если Кангарк, являвшийся частью бдешхства, еще более ста лет продолжал оставаться в составе Армянского марзпанства, другая часть Джавахка, Таширские домены и Ашоцк, на протяжении всего периода господства Сасанидской Персии составляли нераздельную часть Армянского марзпанства.

Hovhannes Khorikyan, On localization of the northern boundary of the Armenian Marzpanate.- After the division of Greater Armenia in 387 the Vitaxate of Gugark keeping its almost independent situation from the King of Iberia formed the Iberian Marzpanate with the Kingdom of Iberia. Moreover, if Kangark being part of Vitaxate remained in the structure of the Armenian Marzpanate for more than one hundred year, the other part of Jawakhk, the domains of Tashir and Ashotzk were undivided parts of the Armenian Marzpanate throughout the domination of the Sasanian Persia.

¹ Տե՛ս Կարտլիս Աջօքեբա, ս. 83. Վախթանգի քույրերից մեկը՝ Միհրանդուխտը, կնության էր տրվել պարսից թագավորին, իսկ մյուս քույրը՝ Խվարանձեն, Սոմխիթի բղեշխ Բակուրին (անդ, էջ 94, 100): Բակուրի անձը մի կողմ դնելով՝ նշենք, որ Սոմխիթի բղեշխություն Գուգարաց բղեշխն է՝ Վրաց մարզպանը: